ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հուլիսի 2026թ. N ՄՈ/455 -Ա

ք. Արմավիր

«ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԵՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լենա Խաչատրյանի 2026 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լենա Խաչատրյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լենա Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ալվարդ Գրիգորյանին:
3. «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ալվարդ Գրիգորյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լենա Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**